

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱԶԻԶԲԵԿՅԱՆ ԶԱՐՈՒՀԻ ՌՈՒԲԵՆԻ

**ԻՍՊԱՆԱԿԱՆ ՀՐԱՇԱՊԱՏՈՒՄ ՀԵՔԻԱԹԻ
ՈՃԱՊԱՏԿԵՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ**

Ժ.02.07 – «Ռումանագերմանական լեզուներ»
մասնագիտությամբ բանասիրական գիտությունների
թեկնածուի
գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2017

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝	բ.գ.թ., դոցենտ Հ.Գ. Բաղդասարյան
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	բ.գ.դ., պրոֆեսոր Ա.Կ. Բարլեզիզյան բ.գ.թ., դոցենտ Լ. Ն. Սարոյան
Առաջատար կազմակերպություն՝	Խ. Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2017թ. հունիսի 21-ին ժամը 11:00-ին՝ ՀՀ ԲՈՀ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող 009 «Օտար լեզուներ» մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ Երևան, Ալեք Մանուկյան 1):


Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2017թ. մայիսի 19-ին:

Մասնագիտական խորհրդի

գիտական քարտուղար,

բ.գ.դ., պրոֆեսոր՝



Ե. Լ. Երզնկյան

Ատենախոսության ընդհանուր բնութագիրը

Յուրաքանչյուր ժողովրդի մշակութային ժառանգությունը համամարդկային մշակութային սեփականության անքակտելի մասն է: Ամեն մի ժողովրդի մշակույթ իր զարմանալի յուրօրինակությամբ, անկրկնելիությամբ, ձևի և բովանդակության բազմազանությամբ տվյալ ազգի ակունքները և ներկան կապող օղակ է: Դա հատկապես վերաբերում է բանահյուսությանը, որի միջոցով առավել ցայտուն է արտահայտվում ժողովրդական ոգին:

Բանահյուսական ստեղծագործություններն ազգային հոգևոր արժեքի մասն են, որոնք հնարավորություն են ընձեռում ներթափանցելու նախորդ սերունդների ներաշխարհը, զգալու ազգային աշխարհընկալման և աշխարհաճանաչողության առանձնահատկությունները և ձեռք բերված արժեքները փոխանցելու սերնդեսերունդ՝ ամբողջացնելով ազգային դիմագիծը: Այս առումով, հեքիաթը՝ ժողովրդական ստեղծագործության հնագույն տեսակը, իր բազմազանությամբ և յուրօրինակությամբ, ուրույն տեղ է զբաղեցնում համաշխարհային բանահյուսական մշակույթի ոլորտում՝ մշտապես գտնվելով գրական-մշակութային շրջանառության մեջ: Հատկապես ժողովրդական հեքիաթներում վառ կերպով արտահայտվում են ժողովրդի կենսափիլիսոփայությունը, դարավոր իմաստությունը, արժեհամակարգը, ձգտումներն ու պատկերացումները կյանքի, չարի և բարու, համամարդկային արժեքների վերաբերյալ:

Հեքիաթը որպես ուրույն տեքստ ոչ միայն պահպանում և սերնդեսերունդ փոխանցում է աշխարհի մասին հնագույն պատկերացումները, ազգային մտածողության արքետիպերը, այլ նաև ազդում է ազգային մտածելակերպի ձևավորման և զարգացման վրա: Հեքիաթը համարվում է համաշխարհային գեղարվեստական մշակույթի պատմական հենքը, ժողովրդական հարուստ ավանդույթների աղբյուր, որն առանձնանում է լեզվամշակութային մեծ ներուժով:

Ներկա ատենախոսությունը նվիրված է իսպանական հրաշապատում հեքիաթի ոճապատկերային համակարգի ուսումնասիրությանը, ինչը հնարավորություն է ընձեռում ավելի խորությամբ ընկալելու բազմաշերտ իսպանական մշակույթը և նրա ժողովրդի ազգային ինքնագիտակցության ակունքները:

Հրաշապատում հեքիաթի ոճական առանձնահատկությունների քննությունը կարևորվում է նրանով, որ հեքիաթի լեզվում սովորական բառերը հայտնվում են արտասովոր ոճական միջավայրում և ենթարկվում որոշակի գեղագիտական արժեքների ազդեցությանը՝ ստանալով վառ արտահայտչական-պատկերավոր բնույթ, ինչպես նաև ձեռք բերելով նոր, ինքնատիպ իմաստներ: Հենց իմաստային այս նոր շերտավորումների լուսաբանմանն է նպատակաուղղված հեքիաթի լեզվի ոճական

առանձնահատկությունների քննությունը, ինչն էլ սույն ուսումնասիրության **առարկան** է:

Ատենախոսության **նպատակն** է բացահայտել իսպանական հրաշապատում հեքիաթի ռճապատկերային համակարգի առանձնահատկությունները՝ մասնավորապես ուսումնասիրելով այդ հեքիաթներում գերիշխող ռճահնարները և դրանց իրականացրած գործառույթները: Ինչպես նկատել է ռուս նշանավոր բանագետ Վ. Պրոպին իր «Հեքիաթի մորֆոլոգիան» աշխատության մեջ, «Հեքիաթասացն ազատ է լեզվական միջոցների ընտրության հարցում: Այդ հարուստ դաշտը ենթակա չէ մորֆոլոգիական հետազոտության: Հեքիաթի ռճը մի երևույթ է, որը պետք է արժանանա հատուկ ուսումնասիրության»¹:

Նշված նպատակն իրականացնելու համար աշխատանքում առաջադրվել են հետևյալ **խնդիրները**.

1. ներկայացնել իսպանական ժողովրդական հրաշապատում հեքիաթը որպես ուրույն առանձնահատկություններով օժտված տեքստ՝ առանձնացնելով նրա ժանրակազմիչ հատկանիշները,

2. բացահայտել իսպանական հրաշապատում հեքիաթին հատուկ ռճահնարները՝ առանձնացնելով համեմատությունը, մակդիրը, հակադրությունը, չափազանցությունը և կրկնությունը՝ իբրև այդ հեքիաթներում գերիշխող ռճահնարներ,

3. քննել համեմատությունը, մակդիրը, հակադրությունը և չափազանցությունը որպես իսպանական հրաշապատում հեքիաթի ռճապատկերային և գեղագիտական-գաղափարական համակարգի անքակտելի տարրեր՝ առանձնացնելով դրանց լեզվամշակութային առանձնահատկությունները,

4. քննել կրկնության տեսակները իսպանական հրաշապատում հեքիաթում այն դիտարկելով որպես հեքիաթի իմաստակառուցվածքային անքակտելի բաղադրիչ,

5. ներկայացնել իսպանական հրաշապատում հեքիաթի ռճահնարները որպես փոխկապակցված հնարների ճկուն համակարգ,

6. վեր հանել այդ հեքիաթներում գերիշխող ռճահնարների հիմնական գործառույթները:

Վերլուծության մեթոդները: Աշխատանքում օգտագործվել են ինչպես ճանաչողության համընդհանուր գիտական, այնպես էլ մասնավոր լեզվաբանական մեթոդներ, որոնք բխում են քննվող նյութի առանձնահատկություններից: Ուսումնասիրության մեջ առաջ քաշված խնդիրների լուծման համար կիրառվել է ռճական ուսումնասիրություններում իր կայուն տեղն ապահոված լեզվաոճական վերլուծության մեթոդը, որը ենթադրում է լեզվական նյութի համակողմանի քննություն երկու տարբեր մակարդակներում

¹ Пропп В. Морфология сказки. Москва: Наука, 1969, с. 102.

ինաստային (բառային, ձևաբանական, շարահյուսական և այլն), որտեղ տեքստը կազմող բոլոր հնարավոր լեզվական միավորները քննության են առնվում որպես լեզվական համակարգի տարրեր՝ վեր հանելով դրանց համակարգային յուրահատկությունները և վերնշանային (ոճական), որը միտված է բացահայտելու լեզվական միավորների ոճավորված կիրառությունները, լրացուցիչ հուզարտահայտչական երանգների առկայությունը, ոճական տարաբնույթ հնարների գործածությունները², ինչպես նաև լեզվաբանաստեղծական մեթոդը, որը նպատակաուղղված է բացահայտելու գեղարվեստական ստեղծագործության լեզվաոճական արժեքների դերը դրա գաղափարական բովանդակության ձևավորման ու գեղագիտական ազդեցության ապահովման մեջ: Ըստ անհրաժեշտության կիրառվել է նաև նկարագրական մեթոդը, որի հիմնական բաղադրիչներն են ուսումնասիրումը, ընդհանրացումը, համակարգումը և դասակարգումը: Առավել խորքային վերլուծության նպատակով կատարվել է նաև համատեքստային վերլուծություն:

Թեմայի **արդիականությունը** պայմանավորված է նրանով, որ իսպանական հրաշապատում հեքիաթի ոճական առանձնահատկությունների ուսումնասիրության հարցը գրեթե արծարծված չէ իսպանագիտական աղբյուրներում, և այս ոլորտին առնչվող շատ հարցեր դեռևս պարզաբանման կարիք ունեն: Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ հեքիաթները սերտորեն կապված են այս կամ այն ազգի կյանքի, մշակույթի և լեզվամտածողության մեջ կայունացած ավանդույթների հետ, ապա կարելի է վստահորեն ասել, որ լայն առումով ներկա ուսումնասիրությունը կարող է նպաստել իսպանացի ժողովրդի ազգային նկարագիրը ամբողջացնելուն:

Ուսումնասիրության **փաստական նյութը** իսպանական ժողովրդական հեքիաթների ժողովածուներն են, որոնցից հատկապես հարկ է առանձնացնել Ա. Էսպինոսայի³ ստվարածավալ ժողովածուն, ինչպես նաև Ա. Ալմոդոկարի⁴, Խ. Գելբենսուի⁵ և Ֆ. Կաբալյերոյի⁶ ժողովածուները:

Աշխատանքի **տեսական արժեքը** կարևորվում է ուսումնասիրության արդյունքներով, որոնք կարող են որոշակի ներդրում ունենալ իսպաներենի ոճագիտության, հեքիաթագիտության և լեզվաբանագիտության քննազավառներին առնչվող մի շարք տեսական խնդիրների լուսաբանման մեջ:

Ատենախոսության **գործնական արժեքը** որոշվում է ուսումնասիրության մեկնաբանություններով ու եզրակացություններով, որոնք կարող են կիրառություն գտնել ոճագիտության, լեզվամշակութաբանության և

² Гаспарян С. Лингвопоэтика образного сравнения. Ереван: Лусакн, 2008, с. 27-35.

³ Espinosa A. M. Cuentos populares recogidos de la tradición oral de España. Madrid: Consejo superior de investigaciones científicas (CSIC), 2009.

⁴ Almodóvar A. R. Cuentos maravillosos. Madrid: Anaya, 2011.

⁵ Guelbenzu J. M. Cuentos populares españoles. Madrid: Siruela, 2000.

⁶ www.bibliotecaspublicas.es

հեքիաթագիտության բնագավառի այլ հետազոտական աշխատություններում, ինչպես նաև ուսումնական դասընթացներում: Անշուշտ, առաջադրված խնդիրների պարզաբանումը կարևոր է իսպանական հրաշապատում հեքիաթի և դրա ռճապատկերային համակարգի առավել համակողմանի ընկալման և գնահատման համար:

Ուսումնասիրության **գիտական նորույթը** նախևառաջ պայմանավորված է իսպանական հրաշապատում հեքիաթների ռճահնարային համակարգի ուսումնասիրության լայն մեթոդաբանական մոտեցմամբ: Սույն ատենախոսության մեջ առաջին անգամ փորձ է արվում համակողմանիորեն ուսումնասիրել այդ հեքիաթներում գերիշխող ռճական հնարները, դրանց գործածության առանձնահատկություններն ու հիմնական ռճական գործառույթները՝ կիրառելով արդի ռճաբանության գիտական մոտեցումները լայն ընդգրկումով:

Ուսումնասիրության գիտական նորույթը որոշվում է ոչ միայն իսպանական հրաշապատում հեքիաթի լեզվաճանաչական առանձնահատկությունների քննությամբ, որը դեռևս չի դարձել հատուկ ուսումնասիրության առարկա, այլ նաև դրա լեզվամշակութային և ազգամշակութային առանձնահատկությունների բացահայտմամբ: Այս խնդիրները առ այսօր ավանդաբար ուսումնասիրվել են բանահյուսության և գրականագիտության շրջանակներում: Նման ուսումնասիրությունները ենթադրում են լեզվաբանության մեջ իսպանական հրաշապատում հեքիաթի ուսումնասիրության հարացույցի ընդլայնում և որակական փոփոխություն:

Աշխատանքի **կառուցվածքն ու բովանդակությունը**: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացությունից և մատենագիտական ցանկից:

Ներածության մեջ ընդհանուր գծերով ներկայացվում են ուսումնասիրության թեման և հիմնահարցերը, որոշարկվում աշխատանքի նպատակն ու խնդիրները, հիմնավորվում կատարված հետազոտության արդիականությունը, նորույթը, տեսական ու գործնական արժեքները:

Առաջին գլուխը («**Իսպանական հրաշապատում հեքիաթի լեզվաճանաչական քննության տեսական նախադրյալները**») բաղկացած է երեք ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում («**Հեքիաթի տեքստի ժանրակազմիչ առանձնահատկությունները**») հակիրճ բնութագրվում է հրաշապատում հեքիաթը որպես տեքստ, ինչպես նաև ներկայացվում հեքիաթի ժանրակազմիչ առանձնահատկությունները: Հրաշապատում հեքիաթի ուսումնասիրությանը նվիրված են բազմաթիվ գիտական աշխատություններ, սակայն հեքիաթագիտության մեջ մինչ այժմ գոյություն չունի հեքիաթի տարբեր գիտնականների կողմից ընդունված սահմանում: Յուրաքանչյուր սահմանում առանձնացնում կամ կարևորում է տվյալ ժանրին բնորոշ մի շարք գծեր, քանի որ ամեն մի հետազոտող հեքիաթի մեջ, որպես առաջնային, ընդգծում է այն

հատկանիշները, որոնք համապատասխանում են հեքիաթի՝ իր ընկալմանը (Ա. Էսպինոսա, Տ. Սապատա Ռուիս, Վ. Պիսանտի, Ֆ. Ռեդոնդո, Վ. Պրոպ, Ե. Մելետինսկի, Դ. Լիխաչև, Ա. Ջիվանյան և այլք):

Հիմնվելով տարբեր տեսակետների վրա՝ կարող ենք փաստել, որ հեքիաթը բանավոր ստեղծագործության ժանր է, որում առավելապես դրսևորվում են ժողովրդախոսակցական ոճին բնորոշ մի շարք տարբերակիչ՝ կառուցվածքային, իմաստային, ոճական և գեղարվեստական առանձնահատկություններ, որոնց շնորհիվ հեքիաթի տեքստը առանձնանում է բանահյուսության այլ ժանրերից:

Երկրորդ ենթագլխում («Հեքիաթի ուսումնասիրությունները իսպանագիտական աղբյուրներում») ներկայացվում է հեքիաթի ձևավորման և զարգացման ուղին իսպանագիտության մեջ: Իսպանիան կարևոր դեր է խաղացել հեքիաթագիտական ուսումնասիրությունների բնագավառում, որի բուն գիտական ժամանակաշրջանը սկիզբ է առել 1920-30-ական թվականներին Ա. Մ. Էսպինոսայի մեծ ջանքերի շնորհիվ: Նրա ժողովածուները բազմիցս հրատարակվել են և մինչ օրս իսպանական բանագիտության շատ ուսումնասիրողների համար անգերազանցելի օրինակ են: Ընդհանուր առմամբ իսպանացի բանագետները հսկայական աշխատանք են իրականացրել՝ հավաքագրելով լայնածավալ նյութ, հրատարակելով բազմահատոր աշխատություններ: Իսպանիան նաև հանդես է գալիս որպես մի երկիր, որի միջոցով Եվրոպայի այլ երկրներ է փոխանցվել արևելյան հեքիաթների հարստագույն ժառանգությունը: Արաբները դարեր շարունակ ապրել և իշխել են Իսպանիայում և հսկայական ու անջնջելի հետք թողել իսպանական մշակույթի վրա: Արևելքի հնագույն հեքիաթների առաջին կարևոր թարգմանություններից որոշները պատկանում են իսպանացիներին: Սույն ենթագլխում ներկայացվում են նաև իսպանացի բանագետների կողմից առաջարկվող հեքիաթների դասակարգման տարբեր սկզբունքներ (Ա. Էսպինոսա, Պ. Կարվալյո-Նետո, Ա. Ալմոդար և այլք):

Երրորդ ենթագլխում («Իսպանական հրաշապատում հեքիաթի առանձնահատկությունները») ամփոփ ներկայացվում են իսպանացի բանագետների կարծիքը իսպանական բանավոր ավանդույթի շրջանակներում հեքիաթի ժանրին բնորոշ առանձնահատկությունների մասին (Խ. Գեյբենսու, Խ. Կամարենո, Մ. Չելվալիեր, Վ. Պիսանտի, Ն. Լոպես, Ա. Ալմոդար և այլք), ինչպես նաև տրվում են հրաշապատում հեքիաթի հիմնական դասակարգումները: Սույն ենթագլխում առանձին քննության է առնվում նաև իսպաներեն “cuento” (հեքիաթ) եզրույթը: Ինչ վերաբերում է «հրաշապատում հեքիաթ» եզրույթին, ապա այն իսպաներենում ունի մի քանի համարժեքներ: Հաճախ կարելի է հանդիպել “cuentos de encantamiento”, “cuentos de hadas”, “cuentos maravillosos”, “cuentos fantásticos”, “cuentos de héroes” անվանումները, որոնցից վերջին երկուսը լայն գործածություն չունեն:

Երկրորդ գլուխը, որը վերնագրված է «**Բանադարձումների կիրառության առանձնահատկությունները իսպանական հրաշապատում հեքիաթում**», բաղկացած է չորս ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում («**Համեմատությունը իսպանական հրաշապատում հեքիաթի գեղարվեստական համակարգում**») նախ տրվում է «համեմատություն» ոճահնարի ընդհանուր բնութագիրը, ներկայացվում համեմատության և փոխաբերության սահմանազատման խնդիրը՝ հիմնվելով մի շարք ուսումնասիրողների կարծիքների վրա (Վ. Պրոպ, Ա. Պոտեբնյա, Ն. Արությունովա, Ս. Գասպարյան, Խ. Պոսուելո և այլք), ուսումնասիրվում համեմատության բնույթն ու դերը ժողովրդական ստեղծագործություններում, ապա համեմատության հնարի միջոցով վեր են հանվում համընդհանուրի և ազգայինի դրսևորման որոշ առանձնահատկություններ իսպանական հրաշապատում հեքիաթներում:

Պատկերավոր համեմատությունը հեքիաթի գերիշխող ոճական հնարներից է, ինչը նախևառաջ պայմանավորված է այն հանգամանքով, որ հեքիաթի լեզուն աչքի է ընկնում պարզությամբ, իսկ համեմատությունն իր պարզագույն կառուցվածքով հեշտորեն հարմարվում է հեքիաթային միջավայրին՝ առավել ոյրորին դարձնելով վերջինիս ընկալումը:

Իսպանական հրաշապատում հեքիաթների նյութի ուսումնասիրությունը թույլ է տալիս փաստել, որ գեղեցկություն արտահայտող համեմատությունները քանակապես գերակշռում են: Որպես հեքիաթային հերոսի գեղեցկության համեմատության եզր այս հեքիաթներից շատերում գերազանցապես կիրառվում են *աստղ* և *արև* բառերը: Համեմատության հիմքում ակնհայտ է *լույս* իմաստի առկայությունը, որի պաշտամունքը մարդկության ամենավաղնջական հավատալիքներից է, ինչը դրսևորվում է տարբեր ժողովուրդների առասպելաբանության ու դիցաբանության մեջ: Ուստի, որպես կանոն, *լույս* բառի հետ կատարվող համեմատությունները շատ գործածական են ամենատարբեր մշակույթներում և հատկապես հեքիաթի ժանրում դրանք համընդհանուր են:

Y estando el rey en la guerra dio a luz su mujer dos niños preciosos que parecían dos estrellas. (Espinosa, La niña sin brazos, p. 352)

La niña tuvo dos niños más hermosos que el sol. (Espinosa, El cisquero y el demonio, p. 354)

Բազմազան և ներդաշնակ է համեմատությունների համատեղ գործածությունը հեքիաթի այլ պոետիկական հնարների՝ չափազանցության, հակադրության, նվազասույթի հետ: Օրինակ՝

Estaba el tal castillo que daba espeluzos mirarlo. Más sombrío que una noche de truenos, más engestado que un facineroso y más callado que un difunto. (Caballero, Los caballeros del pez, p. 8)

Տվյալ օրինակում ամրոցի խորհրդավորությունը համապատասխանաբար նկարագրվում է՝ «ավելի մռայլ, քան ամպրոպային գիշերը», «տեսքից ավելի

սարսափազրու, քան հանցագործը», «հանգուցյալից ավելի լուռ» չափազանցական համեմատություններով:

Երկրորդ ենթագլխում («Համեմատությունների փոխակերպման սկզբունքները») փորձ է արվում բացահայտելու համեմատության ոճահնարի փոխակերպելիության որոշ առանձնահատկություններ իսպանական հրաշապատում հեքիաթներում ելնելով փոխակերպումների՝ Ա. Զիվանյանի առաջ քաշած միջտեքստային և ներտեքստային դասակարգումների⁷: Այս ենթագլխում համեմատության հնարի միջոցով ներկայացվում է հրաշապատում հեքիաթներում առկա ոճահնարների փոխկապակցվածությունը, որը դրսևորվում է փոխակերպումների տեսքով: Սույն քննությունը փաստում է, որ իսպանական հրաշապատում հեքիաթներում հնարավոր են համեմատությունից փոխաբերություն, համեմատությունից մակդիր, համեմատությունից անձնավորում, համեմատությունից փոխանունություն, համեմատությունից չափազանցություն և համեմատությունից կերպարանափոխություն փոխակերպումները:

Ստորև ներկայացնենք համեմատությունից փոխաբերություն ներտեքստային փոխակերպման մի օրինակ, որի դեպքում հեքիաթը կոչվում է գլխավոր հերոսի համեմատության փոխակերպված տարբերակ ներկայացնող անունով: Օրինակ՝

Por su tamaño, igual que el de una almendra, su madre la llamo Almendrita. (Almendrita, p. 1)⁸

Ինչպես տեսնում ենք, համեմատության հնարի միջոցով ներկայացվող հերոսուհու բնութագիրը հեքիաթի հետագա շարադրանքում վերածվում է անձնանվան՝ «քանի որ երեխան նուշի չափ էր, մայրը նրան կոչեց Նուշիկ»: Նույն հատվածում կարելի է դիտարկել նաև համեմատությունից համեմատություն ներտեքստային հարացուցային փոխակերպման մի քանի օրինակ («una niña tan hermosa como diminuta», “era tan pequeña que su padre la paseaba asomada al bolsillo de la chaqueta”, “por su tamaño, igual que el de una almendra”), որտեղ նշյալ համեմատությունները օգտագործվում են հերոսուհու փոքրամարմին լինելը ընդգծելու համար:

Իսկ ներքոհիշյալ օրինակում առկա է ներտեքստային շարակարգային եռակի փոխակերպում, երբ համեմատությունը՝ «արջի նման մի երեխա», վեր է

⁷ Ա. Զիվանյանը, կախված տեղի ունեցող փոփոխության ուղղվածության բնույթից՝ ուղղաձիգ թե հորիզոնական, առանձնացնում է շարակարգային և հարացուցային փոխակերպումներ: Առաջինի դեպքում բառանյութի հարաբերական պահպանման պայմաններում փոխվում է ոճահնարի կարգը, իսկ երկրորդը ենթադրում է ոճահնարի բառանյութի արմատական փոփոխություն՝ առանց ոճահնարի կարգավիճակը փոխելու (Զիվանյան Ա. Հրաշապատում հեքիաթի պոետիկան. համեմատությունը հեքիաթի համատեքստում (ատենախոսություն «Բանահյուսություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման), Երևան, 2008, էջ 169-170):

⁸ <http://www.fundacionlengua.com/cuentos-populares/pdf/cuento7.pdf>

ածվում «արջի որդի» փոխաբերության, այնուհետև՝ «Արջ Խուանիտո» մակդիրի, որը կազմվել է յուրահատուկ «հատուկ անուն + հոդ + գոյական» կառուցով չփոփոխելով բառային կազմը.

-Aquí le traigo un niño que parecía un oso, que es hijo del oso, y se llama Juanito el Oso. (Espinosa, Juanito el Oso, p. 407)

Սույն վերլուծությունը փաստում է, որ ոճահնարների փոխակերպելիությունը իսպանական հրաշապատում հեքիաթի պատկերավոր համակարգի ուրույն առանձնահատկություններից է:

Երրորդ ենթագլուխը («Հակադրությունը որպես իսպանական հրաշապատում հեքիաթի պատկերային համակարգի բաղկացուցիչ տարր») նվիրված է հակադրության (antítesis) ոճական գործածության առանձնահատկությունների քննությանը իսպանական հրաշապատում հեքիաթներում, որտեղ փորձ է արվում վեր հանել այդ հեքիաթներում տեղ գտած հիմնական հակադրությունները, մասնավորապես որոշել նրանց տեղը այլ գեղարվեստական հնարների շարքում, բացահայտել հիմնական գործառույթները, կազմավորման ձևերը:

Հակադրությունը ծառայում է որպես հեքիաթի սյուժեի կազմավորման և զարգացման կարևոր ոճահնար՝ դրսևորվելով ինչպես մի շարք հիմնարար հասկացությունների (բարի-չար, կյանք-մահ), սյուժեի (ազատություն-գերություն, սեր-ատելություն), կերպարների ըստ սոցիալական վիճակի (աղքատ-հարուստ), ընտանեկան հարաբերությունների (ամուսին-կին, եղբայր-քույր), սեռի (թագավոր-թագուհի), տարիքի (երիտասարդ-ծեր), արտաքին տեսքի (գեղեցիկ-տգեղ) հակադրմամբ, այնպես էլ որոշ քերականական, շարահյուսական, բառային միջոցների օգտագործմամբ:

Իսպանական հրաշապատում հեքիաթներում հակադրությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ չնայած հեքիաթի գաղափարաբարոյական մտահղացումը իրականացվում է հակադրությունների բարդ համակարգի միջոցով, այնուամենայնիվ, բոլոր հեքիաթները կարելի է խմբավորել գլխավոր հակադրության՝ դրականի և բացասականի շուրջ, քանի որ հեքիաթը հաստատում է բարու և արդարության գաղափարները՝ մերժելով չարը, նախանձը, անարդարությունը:

Չորրորդ ենթագլխում («Կրկնության կիրառական արժեքը իսպանական հրաշապատում հեքիաթում») տրվում են կրկնության հնարի տարբեր մեկնաբանություններ և լեզվաբանական գրականության մեջ առկա որոշ տեսություններ (Ի. Արնոլդ, Շ. Բալլի, Վ. Պրոպ, Ի. Գալպերին, Դ. Լիխաչև, Խ. Կասարես, Ֆ. Ռեդոնդո, Ա. Ռոզենբլատ և այլք), ինչպես նաև կրկնությունը ներկայացվում է որպես հեքիաթի իմաստակառուցվածքային անքակտելի բաղադրիչ: Միաժամանակ ուսումնասիրվում են կրկնությունների տեղն ու դերը իսպանական հրաշապատում հեքիաթներում, մասնավորապես որոշարկվում են դրանցում առավել լայն տարածում գտած կրկնությունների տեսակները (հարակրկնություն, վերջույթ, օղակ, կցուրդ, շղթայակցում, ավելադրություն,

նմանավերջություն և այլն), ինչպես նաև վեր հանվում հիմնական գործառույթները:

Իսպանական հրաշապատում հեքիաթների համար բնութագրական է բառաշարահյուսական կրկնության վրա հիմնված շարահյուսական զուգահեռ կառույցների⁹ կիրառումը մի շարք բառային կրկնությունների ուղեկցմամբ, որոնք ապահովում են հեքիաթի իմաստակառուցվածքային ամբողջականությունը: Օրինակ՝

El que aquí almuerza come, y el que come cena, y el que cena se acuesta conmigo. (Espinosa, Las tres ascuitas, p. 396)

Տվյալ օրինակում հարակրկնությամբ ուղեկցվող շղթայակցման հնարը ստեղծում է գործողությունների հաջորդականության և կապակցվածության տպավորություն:

Իսպանական հեքիաթների նախաբանը, ինչպես և վերջաբանը, հաճախ հումորային են, դիթիկ և հանգավորված: Հանգավորված նախաբանի նպատակը լսողին զարմանալի պոետիկ պատմության ընկալմանը տրամադրելն է, ինչպես օրինակ, ստորև ներկայացված հատվածում.

Habia una madre que tenía un hijo que se llamaba Periquito sin Miedo. (Espinosa, Periquito sin Miedo, p. 415)

Նման հանգերը կարող ենք անվանել բառախաղային, քանի որ սովորաբար կառուցվում են իմաստով տարբեր բառերի և բառակապակցությունների հնչունային նմանության հիման վրա:

Իսպանական հեքիաթներում օգտագործվում է նաև մեկ այլ գեղարվեստական հնար՝ ձևույթային կրկնությունը, որը կարող է լինել արմատական կամ ածանցային: Իսպանական հրաշապատում հեքիաթներում առավել հաճախ հանդիպում է ածանցային կրկնությունը, որը միևնույն ածանցն ունեցող բառերի կրկնությունն է: Օրինակ՝

Y colorín colorado, cuento acabado. (Espinosa, Los tres trajes, p. 365)

Սույն ենթագլխում ուսումնասիրվում են նաև իսպանական հրաշապատում հեքիաթներում տեղ գտած կրկնությունների հիմնական ոճական գործառույթները:

Երրորդ գլուխը, որը վերնագրված է «Փոխաբերական արտահայտչամիջոցների դերը իսպանական հրաշապատում հեքիաթում», բաղկացած է երկու ենթագլուխներից:

⁹ Զուգահեռ շարահյուսական կառույցները կարևոր տեքստակազմիչ գործառույթ են իրականացնում: Դրանց օգնությամբ տարբեր դրվագներ կապվում են միմյանց՝ ստեղծելով հեքիաթի միասնական, ամբողջական կառուցվածք: Բացի այդ զուգահեռականությունները գործածվում են սյուժեի առանցքային պահերի ընդգծման նպատակով, քանի որ ավանդական հրաշապատում հեքիաթը կարող է ամբողջությամբ կառուցված լինել տարբեր գործող անձանց կողմից իրականացվող միևնույն իրադարձության եռակի (կամ բազմակի) կրկնություններից: Եռակի կրկնության հնարը ծառայում է սյուժեի գրավչությունն ուժգնացնելու նպատակին, որը հեքիաթի ժանրի գլխավոր առանձնահատկություններից է:

Առաջին ենթապլխում («Մակդիրի գործածության առանձնահատկությունները») նախ ներկայացվում են մակդիրի սահմանման, դասակարգման, ձևաբովանդակային առանձնահատկությունների, ինչպես նաև գեղագիտական գործառույթների քննության տեսական հիմքերը (Ա. Վեսելովսկի, Վ. Ժիրմունսկի, Ա. Եվգենևա, Ի. Արնոլդ, Ֆ. Խլլաթյան, Է. Ջրբաշյան, Պ. Պողոսյան, Լ. Կառետեր, Գ. Սորբեխանո և այլք), քննության է առնվում մակդիրների սահմանագատման խնդիրը ըստ ընդհանուր բանահյուսական և ներժանրային մակդիրների, ապա վեր են հանվում հեքիաթներին հատուկ մշտական մակդիրների առանձնահատկությունները և դրանց ոճական գործառույթները: Սույն ենթապլխում մակդիրը քննվում է որպես իսպանական հրաշապատում հեքիաթների պատկերավորման համակարգի անքակտելի բաղադրիչ, որը, զուգակցվելով արտահայտչական մյուս միջոցների հետ, գործածվում է որպես վառ պատկերների ու համապատասխան ռիթմի ձևավորման, հերոսների և նրանց շրջապատող աշխարհի բազմապիսի բնութագրերի, հոգեկան նկարագրի և փոխհարաբերությունների արտացոլման միջոց: Մակդիրների մեր դասակարգումը հիմնվում է ռուս լեզվաբան Ի. Արնոլդի կողմից առաջարկվող մշտական մակդիրների սահմանագատման վրա՝ կրկնաբանական, գնահատողական և նկարագրական: Նշենք, որ իսպանական հրաշապատում հեքիաթներում հանդես եկող մակդիրների քննությունը ցույց է տալիս նկարագրական մշտական մակդիրների ակնհայտ գերակշռությունը մյուս մակդիրների նկատմամբ: Օրինակ՝

Y cuando riñó con su novia se iba al Castillo de Irás y no Volverás. (Espinosa, Blanca Flor, la hija del diablo, p. 388)

Իսպանական հեքիաթներում շատ գործածական է “Castillo de Irás y no Volverás” (Ամրոց, որ կգնաս, բայց չես վերադառնա) արտահայտությունը, որտեղ մշտական “de Irás y no Volverás” մակդիրի միջոցով պատկերավոր ձևով արտահայտվում է ամրոցի վտանգավոր և առեղծվածային լինելը: Տվյալ մակդիրը Վեսելովսկու կողմից առաջ քաշած *մակդիր-պատկերներ* խմբի վառ օրինակ է:

Atravesé en mi caída el mar, y me encontré con la luna, en la que me entré por un ojo, y me hallé que tenía los sesos de plata y los cabellos de oro, me descolgué por uno de ellos, la luna volvió la cara, y al verme se cortó el cabello de un bocado. (Caballero, Cuento de embustes, p. 2)

Վերոբերյալ օրինակում ներկայացվում է մի դրվագ, երբ հերոսը հանդիպելով լուսնի հետ՝ հայտնաբերում է, որ այն ոսկեծամիկ է և օժտված արծաթե ուղեղով: Նշենք, որ “de oro” (ոսկե) և “de plata” (արծաթե) նկարագրական մշտական մակդիրները լայնորեն տարածված են իսպանական հրաշապատում հեքիաթներում: Ոսկու և արծաթի խորհրդանիշները իսպանական ժողովրդական հեքիաթներ են ներմուծվել արևելքից

միջնադարում, արաբական մշակույթի ազդեցության ներքո և վերածվել մշտական մակդիրների¹⁰:

Իսպանական հեքիաթներին բնորոշ են նաև գլխավոր և երկրորդական հերոսների անուններով արտահայտված նկարագրական մակդիրները, որոնց միջոցով հակիրճ տրվում է հերոսների ընդհանուր բնութագիրը. *Estrella de Oro (Ոսկե Աստղը)*, *Periquito sin Miedo (Անվախ Պերիքիտոն)*, *Jorge el valeroso (Քաջ Խորխեն)*, *Jorge el tonto (Հիմար Խորխեն)* և այլն: Իսպանական հրաշապատում հեքիաթներում մակդիրները հաճախ հանդես են գալիս հենց վերնագրերում, որոնք ընթերցողին հուշում են հեքիաթի հիմնական թեման: Ընդ որում, այդ հեքիաթների վերնագրերում շատ գործածական են գոյական+գոյական, ինչպես նաև խիստ հուզարտահայտչական երանգավորում ունեցող գոյական+որոշյալ հոդ+գոյական մակդիրային կառույցները. *El príncipe rana (Գորտ արքայազնը)*, *La gallina duende (Քաջք հավը)*, *Juan Cigarrón (Մորեխ Խուանը)*, *El diablo maestro (Ուսուցիչ սալաման)*, *Juanito el Oso (Արջ Խուանիտոն)*, *El duendecillo fraile (Քաջք հոգևորականը)* և այլն:

Երկրորդ ենթագլխում («Չափազանցությունը որպես հրաշապատում հեքիաթի իմաստակառուցվածքային անբակտելի տարր») նախ ամփոփ ներկայացվում են չափազանցության տարբեր սահմանումներ, ապա վեր հանվում չափազանցությունների հիմնական ոճական գործառույթները:

Չափազանցությունը հեքիաթներում հանդիպում է ինչպես հերոսների արտաքին տեսքի, նրանց գործողությունների, այնպես էլ շրջապատող միջավայրի երևույթների և առարկաների նկարագրություններում: Հատկապես տվյալ ժանրում չափազանցությունները երբեմն սահման չեն ճանաչում: Օրինակ՝ *-Ya no me desencanto ahora. Ya me voy, y pa encontrarme tienes que gastar siete pares de zapatos de hierro. (Espinosa, Cabeza de burro, p. 397)*

Նշյալ օրինակում ժամանակի երկարաձգման նպատակով հանդես է գալիս «մաշել յոթ զույգ երկաթե կոշիկներ» արտահայտությունը, որը իսպանական հրաշապատում հեքիաթներին բնորոշ չափազանցություն է:

Այս ենթագլխում կարևորվում է նաև չափազանցության զուգակցումը այլ ոճական հնարների, հատկապես համեմատության, մակդիրի, անձնավորման հետ:

Եզրակացության մեջ ամփոփվում են ուսումնասիրության հիմնական արդյունքները.

1. Համեմատությունը իսպանական հրաշապատում հեքիաթներում հանդիպող ամենատարածված հնարներից է, որը պայմանավորված է հեքիաթի ժանրային առանձնահատկություններով: Յուրաքանչյուր հեքիաթային ստեղծագործություն յուրօրինակ է և անկրկնելի, և համեմատությունների պատկերավոր բնույթի բացահայտման նպատակով հարկ է հաշվի առնել

¹⁰ Cooper J. C. Cuentos de Hadas: alegorías de los mundos internos. Málaga: Editorial Sirio, 2004, p. 18.

տվյալ ժողովրդի պատկերավոր մտածողության առանձնահատկությունները:

ա) Ըստ կառուցվածքային չափանիշի իսպանական հրաշապատում հեքիաթներում գեղարվեստական համեմատություններ կազմելու գործառությամբ առավել հաճախակի հանդես եկող համեմատական կապը *como*-ն է:

բ) Հրաշապատում հեքիաթի յուրահատուկ միջավայրում ոճական հնարները փոխկապակցված են կառուցվածքային, ոճական և իմաստային առնչություններով: Համեմատությունների գերակշռող մեծամասնությունը հիմնված է չափազանցության վրա, որոնք առավելապես օգտագործվում են հերոսների և նրանց շրջապատող միջավայրի արտասովորությունը, գեղեցկությունը կամ տգեղությունը պատկերելու համար: Գեղեցկություն արտահայտող համեմատությունները քանակապես գերակշռում են՝ կրելով համընդհանուր բնույթ: Ընդ որում, որպես գեղեցկության համար համեմատության եզր իսպանական հրաշապատում հեքիաթներից շատերում գերազանցապես կիրառվում են *աստղ* (*estrella*), *արև* (*sol*), *վարդ* (*rosa*), *արքայադուստր* (*princesa*) բառերը: Գեղեցկության բարձր աստիճան ներկայացնող գունանվանական համեմատությունները իսպանական հրաշապատում հեքիաթներում սակավաթիվ են: Տգեղության բնութագիրը նույնքան ներդաշնակ է հեքիաթի պոետիկային, որքան գեղեցկությանը: Տվյալ հեքիաթներում որպես տգեղության չափանիշ հաճախ հանդիպում են *սապանա* (*diablo*), *շուն* (*perro*), *հրեշ* (*monstruo*), *ղև* (*mengue*) բառերը:

գ) Իսպանական հրաշապատում հեքիաթներին բնորոշ առանձնահատկություններից են համեմատություններում օգտագործվող գոեհկաբանությունները:

դ) Այս տիպի հեքիաթների տեքստը բնութագրվում է նաև բաղադրիչների փոխակերպելիությամբ, որն ակնհայտորեն դրսևորվում է նրա ոճահնարային համակարգում առկա հիմնական ոճահնարներում: Սրանք հանդես են գալիս ինչպես ներտեքստային, այնպես էլ միջտեքստային շրջանակներում՝ ընդգրկելով գլխավորապես շարակարգային փոփոխություններ:

2. Հակադրությունը իսպանական հրաշապատում հեքիաթի գաղափարական-գեղագիտական կառուցվածքի կարևորագույն տարրն է, որը ծառայում է որպես սյուժեի կազմավորման և զարգացման կարևոր ոճահնար: Հակադրությունը դրսևորվում է ինչպես որոշ հիմնարար հասկացությունների, այնպես էլ տարբեր շարահյուսական, բառային միջոցների օգտագործմամբ: Հակադրությունները հաճախ կառուցվում են համատեքստային հականիշների հիման վրա, որոնք խոսքային որոշ իրադրություններում ձեռք են բերում իմաստային նոր երանգներ և արտահայտում հակադրական հարաբերություններ: Կերպարների, նրանց գործողությունների հակադրությունը հաճախ զուգակցվում է

հակադրության վրա հիմնված զուգահեռ շարահյուսական կառույցների, այսինքն՝ շարահյուսական զուգահեռականության հաճախակի գործածությամբ:

3. Կրկնությունը իսպանական հրաշապատում հեքիաթի իմաստային կառուցվածքի անբակտեյի բաղադրիչներից է, գերիշխող հնարներից մեկը, որը դիտարկվում է լեզվի տարբեր՝ հնչյունական, շարահյուսական և բառային մակարդակներում և կատարում ոճական տարբեր գործառույթներ:

ա) Առավել բնութագրական է բառաշարահյուսական կրկնությունը՝ որպես արտահայտչական շեշտադրող և տեքստակազմիչ միջոց, որն ապահովում է հեքիաթի իմաստակառուցվածքային ամբողջականությունը, սահունությունն ու բարեհնչունությունը:

բ) Լայն տարածում ունի շարահյուսական զուգահեռ կառույցների կիրառությունը այնպիսի բառային կրկնությունների ուղեկցմամբ ինչպիսիք են՝ հարակրկնությունը, վերջույթը, օղակը, կցուրդը, ավելադրությունը, նմանավերջությունը, բազմաշաղկապությունը, նույնաբանությունը և այլն: Սրանց միջոցով բացահայտվում է կրկնության ոճական էությունն իր ողջ դրսևորումներով նպաստելով հեքիաթի տեքստի գեղագիտական մթնոլորտի ձևավորմանը, ինչպես նաև ընթերցողի վրա թողնելով տրամաբանական և հուզական ուժգին ազդեցություն:

գ) Իսպանական հրաշապատում հեքիաթներին բնորոշ են նաև հնչյունային մակարդակում տեղ գտնող կրկնությունները, ինչպես նաև ձևային կրկնությունները, որոնք ապահովում են հեքիաթի տեքստի դիֆմիկ հնչողությունը և մեղեդայնությունը:

դ) Կրկնությունները կատարում են արտահայտչականության ուժգնացման, գործողությունների հաջորդականության ապահովման, գործողության բազմակիության կամ տևողության, հերոսների հուզական վիճակի արտահայտման, դիֆմիկության ապահովման, տեքստին որոշակի պարզություն և հստակություն հաղորդելու գործառույթները:

4. Մակդիրը հրաշապատում հեքիաթի գեղագիտական և ճանաչողական արժեքի բացահայտմանը նպաստող կարևոր ոճահնար է:

ա) Իսպանական հրաշապատում հեքիաթների տարբեր դրվագներում հանդիպող նմանատիպ երևույթներ և հեքիաթային հերոսներ նկարագրվում են նույն մակդիրներով անկախ նրանց բնորոշ անհատական գծերից, ընդ որում այստեղ գործում են ոչ թե հոգեբանական բարդ կերպարներ, այլ որևէ մի հատկանիշով առանձնացող գործող անձինք, որոնք բնութագրվում են մի մակդիրով:

բ) Ի տարբերություն անհատական-հեղինակային մակդիրների, որոնք հեղինակի ստեղծագործական մտքի և երևակայության արտահայտությունն են, մշտական մակդիրների պատկերավորությունը հրաշապատում հեքիաթում հիմնվում է տվյալ առարկայի, երևույթի,

կերպարի առավել բնորոշ, էական հատկանիշների վրա: Լինելով հրաշապատում հեքիաթի ժանրային առանձնահատկություններից՝ այն ծառայում է որպես տիպականացման միջոց:

գ) Առանձին խումբ են կազմում մակդիր-պատկերները, որոնցում առավել ցայտուն են դրսևորվում տվյալ ժողովրդի գեղագիտական մտածողության առանձնահատկությունները:

դ) Իսպանական հրաշապատում հեքիաթներում հանդիպում են այնպիսի մակդիրներ, որոնք այլ խոսքային իրադրության մեջ կարող են հանդես գալ տրամաբանական բնորոշմամբ, սակայն հեքիաթի ուրույն միջավայրում ձեռք են բերում պատկերավոր-արտահայտչական բնույթ և մակադրյալին հաղորդում որոշակի գաղափարական-գեղագիտական արժեք:

5. Չափազանցությունը հրաշապատում հեքիաթի գեղարվեստական-պատկերավոր համակարգի անբակտելի մասն է, որն էական ազդեցություն է թողնում հեքիաթի սյուժեի և ողջ կառուցվածքի վրա: Այն հեքիաթային իրականության (հերոսների, նրանց գործողությունների, ժամանակի և տարածության ընկալման) միտումնավոր տեղաշարժ է, կանխամտածված ոճական հնար, որը ենթադրում է հեքիաթասացի և ընթերցողի միջև փոխադարձ համաձայնություն: Իսպանական հրաշապատում հեքիաթներում չափազանցությունը հաճախ զուգակցվում է այլ ոճական հնարների, հատկապես համեմատության, մակդիրի, անձնավորման հետ: Հեքիաթային պատկերավորության հիմքում ոչ թե չափազանցությունն է ընկած, այլ անդրաշխարհիկ ուժերի երևակայական գոյության վրա հիմնված ֆանտաստիկ-կախարդական հնարանքը, որը նպաստում է չափազանցությունների առաջացմանը:

Այսպիսով՝ իսպանական հրաշապատում հեքիաթների լեզվաոճական և լեզվաբանաստեղծական առանձնահատկությունների քննությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հեքիաթի գեղարվեստականության անբակտելի մաս հանդիսացող ոճապատկերային համակարգի միջոցով հեքիաթի լեզուն ձեռք է բերում առավել մեծ արտահայտչականություն և արտացոլում իսպանացի ժողովրդի պատկերավոր մտածողության առանձնահատկությունները, նրա աշխարհաճանաչողությունն ու աշխարհընկալման ինքնատիպությունը:

Աշխատանքի հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. Հեքիաթի ժանրի որոշ առանձնահատկություններ հայ և իսպանական բանահյուսություններում // Լրաբեր հասարակական գիտությունների, N 2-3, Երևան, ՀՀ ԳԱԱ Գիտություն հրատ., 2012, էջ 324-333:
2. Մակդիրի գործածության մի քանի առանձնահատկություններ իսպանական հրաշապատում հեքիաթներում // Լրաբեր հասարակական գիտությունների, N 3, Երևան, ՀՀ ԳԱԱ Գիտություն հրատ., 2013, էջ 216-223:
3. Չափազանցության գործածության մի քանի առանձնահատկություններ իսպանական հրաշապատում հեքիաթներում // Օտար լեզուները բարձրագույն դպրոցում, N 1 (16), Երևան, ԵՊՀ հրատ., 2014, էջ 41-50:
4. Հակադրության գործածության մի քանի առանձնահատկություններ իսպանական հրաշապատում հեքիաթներում // Օտար լեզուները բարձրագույն դպրոցում, N 2 (17), Երևան, ԵՊՀ հրատ., 2014, էջ 19-29:
5. Համեմատությունը իսպանական հրաշապատում հեքիաթի գեղարվեստական համակարգում // Օտար լեզուները բարձրագույն դպրոցում, N 3 (21), Երևան, ԵՊՀ հրատ., 2016, էջ 24-36:
6. Կրկնության տեսակները և դրանց ոճական գործառույթները իսպանական հրաշապատում հեքիաթում // Լրաբեր հասարակական գիտությունների, N 3, Երևան, ՀՀ ԳԱԱ Գիտություն հրատ., 2016, էջ 182-189:

IMAGERY IN SPANISH TALES OF MAGIC

SUMMARY

The present paper is devoted to the study of imagery in Spanish tales of magic which enables one to go deep into the Spanish multilayered culture and the sources of their national identity.

The aim of the dissertation is to reveal the peculiarities of imagery of the Spanish tales of magic, particularly studying the stylistic devices used most frequently in those tales and their functions.

To reach this objective the following problems have been posed:

1. to present the Spanish tales of magic as texts with special peculiarities taking into consideration their generic characteristics;
2. to find out the stylistic devices used in Spanish tales of magic with simile, epithet, antithesis, hyperbole and repetition being of utmost importance as the prevailing stylistic devices in those tales;
3. to study simile, epithet, antithesis and hyperbole as an indispensable part of imagery and aesthetic-ideological impact of Spanish tales of magic paying special attention to their linguocultural peculiarities;
4. to study the types of repetition in Spanish tales of magic- an indivisible part of the meaning and structure of the tale;
5. to present the stylistic devices of Spanish tales of magic as a flexible system of interconnected devices;
6. to reveal the essential functions of the stylistic devices prevailing in those tales.

To solve the problems posed in the research we have used the linguostylistic method of analysis, a method of great significance in stylistic researches, as well as the linguopoetic method. Furthermore the descriptive method has been used when necessary and for a more thorough research contextual analysis has been carried out.

The scientific novelty of the study is first and foremost conditioned by the ample methodological approach applied to the imagery of Spanish tales of magic. The present paper for the first time attempts to comprehensively study the prevalent stylistic devices in those tales, the peculiarities of their use and the basic stylistic functions applying modern scientific approaches of stylistics with wider coverage.

The topicality is conditioned by the fact that the research of the stylistic peculiarities of Spanish tales of magic has not been carried out in the sources of Spanish studies so far and many issues dealing with this field still need clarification. If

we take into consideration the fact that fairy tales are closely connected with the established traditions of the life, culture and language awareness of this or that nation, then we may surely state that the present research may foster to make the Spanish national identity complete.

The theoretical value of the work consists in the outcomes of the work which may have a certain contribution in highlighting a number of theoretical issues related to the spheres of Spanish stylistics, fairy tale studies and linguistics.

The practical significance of the dissertation is determined due to its interpretations and conclusions which may be applied in further researches dealing with the areas of stylistics, linguocultural studies and fairy tale studies, as well as in educational courses. Undoubtedly, the clarification of the issues put forward and solved in the work are of paramount importance for more comprehensive perception and assessment of Spanish tales of magic and their imagery.

The factual material of the research has been picked out of Spanish folk tales with special reference to the bulky miscellanea by A. Espinosa /Espinosa, 2009/, as well as A. Almodóvar /Almodóvar, 2011/, J. Guelbenzu /Guelbenzu, 2000/ and F. Caballero /www.bibliotecaspublicas.es/.

Structurally, the dissertation consists of an introduction, three chapters with relevant subchapters, a conclusion and a bibliography.

Introduction gives the subject-matter of the research in general, the objectives of the work, the topicality, novelty of the research, as well as the theoretical and practical values. Chapter One presents a brief description of the tales of magic as texts, the peculiarities of the language, style and genre. It also presents the origins and the role of those tales in Spanish studies, reveals the peculiarities of the Spanish folk tales, their basic classifications and gives the **definition of the term “tale” in Spanish**. Chapter Two studies the use of simile, antithesis and repetition in Spanish tales of magic. Chapter Three focuses on the study of the use of epithet and hyperbole in Spanish tales of magic. We have tried to determine the role of the above mentioned stylistic devices among other stylistic devices, to find out their basic functions and the ways of their formation.

Conclusion briefly sums up the outcomes of the research and the basic conclusions.

ЗРУИ РУБЕНОВНА АЗИЗБЕКЯН
ОБРАЗНЫЙ МИР ИСПАНСКОЙ ВОЛШЕБНОЙ СКАЗКИ

РЕЗЮМЕ

Данная диссертация посвящена изучению образного мира испанской волшебной сказки, что позволяет глубже понять многослойную испанскую культуру и истоки национального самосознания народа.

Целью диссертации является выявление особенностей образного мира испанской волшебной сказки, в частности, изучив преобладающие в этих сказках стилистические приемы и их функции.

Для осуществления данной цели в исследовании выдвинуты следующие **задачи**:

1. представить испанскую волшебную сказку как наделенный особой спецификой текст, выделив его жанрообразующие свойства,
2. выявить специфические для испанской волшебной сказки стилистические приемы, выделив сравнение, эпитет, антитезу, гиперболу и повтор как преобладающие в сказках стилистические приемы,
3. рассмотреть сравнение, эпитет, антитезу и гиперболу как неотъемлемый элемент образного мира и эстетически идейной системы испанской волшебной сказки, выявив их лингвокультурные особенности,
4. анализировать виды повторов в испанской волшебной сказке, рассматривая его как неотъемлемую смыслоструктурную составляющую сказки,
5. представить стилистические приемы испанской волшебной сказки как гибкую систему взаимосвязанных приемов,
6. выявить основные функции преобладающих в этих сказках стилистических приемов.

Для решения выдвинутых в работе задач был применен признанный в стилистических исследованиях **метод** лингвостилистического анализа, а также лингвопоэтический метод. При необходимости был применен также описательный метод, а для более глубокого анализа – контекстуальный анализ.

Научная новизна диссертации прежде всего обусловлена широким методологическим подходом исследования системы образных приемов. В данной работе впервые делается попытка всесторонне рассмотреть доминирующие в этих сказках стилистические приемы, особенности их применения и основные стилистические функции, применяя научные подходы современной стилистики.

Актуальность темы обусловлена тем, что вопрос изучения стилистических особенностей испанской волшебной сказки почти не развит в испанских научных источниках и многие вопросы соприкасающиеся к этой сфере требуют пояснений. Если иметь в виду то обстоятельство, что сказки тесно связаны со стабильными традициями жизни, культуры и лингвопсихологии того или иного народа, то можно с уверенностью сказать, что данное исследование может способствовать формированию целостности национального облика испанского народа.

Теоретическая значимость диссертации оценивается результатами исследования, которые могут внести некоторую лепту в освещении ряда теоретических задач, касающихся сфер испанской стилистики, сказоведения и лингвистики.

Практическая ценность диссертации выявлена в комментариях и выводах, которые могут найти применение в исследовательских работах по стилистике, лингвокультуре и сказоведению, а также на учебных курсах. Несомненно, разъяснение поднятых вопросов важно для более всестороннего восприятия и оценки испанской волшебной сказки и его образного мира.

Фактическим материалом диссертации являются сборники испанских народных сказок, из коих надо выделить сборники А Эспиносы /Espinosa,2009/, А Альмодовара /Almodovar,2011/, Х. Гельбенсуи /Guelbenzu,2000/ и Ф. Кабальеро /www.bibliotecaspublikas.as/.

Диссертация состоит из введения, трех глав с соответствующими подразделами, заключения и библиографии.

Во **Введении** общими чертами представлены тема и проблемы исследования, обозначены ее цель и задачи, обосновываются актуальность, новизна, теоретическая и практическая ценность диссертации.

В первой главе кратко характеризуется волшебная сказка как текст, особенности жанрообразования ее языка и стиля, представлены путь формирования и развития сказки в испановедении, выявляются особенности испанской народной сказки, ее основные классификации, а также характеристика термина “сказка” в испанском языке. **Вторая глава** посвящена анализу особенностей стилистического применения сравнения, антитезы и повтора, а **третья глава** эпитета и гиперболы в испанской волшебной сказке, где делается попытка выявить их место в ряду других художественных приемов, основные функции, способы их формирования.

В заключении кратко обобщаются результаты и основные выводы исследования.